# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի հումանիտար խմբի 12 սովորողները նոյեմբերի 4- դեկտեմբերի 10-ն ընկած վեցշաբաթյա ժամանակահատվածում հայ գրականություն առարկայից իրականացրին նախագծային աշխատանք՝ «Խաչատուր Աբովյան-արվեստ փոխադարձ կապը:Աբովյանի կերպարը արվեստում» թեմայով:

Նախագծային աշխատանքի ընթացքում սովորողներն իրագործեցին սահմանված հետևյալ նպատակները.

1.խթանել սովորողների ինքնուրույն ճանաչողական գործունեության հմտությունները, նպաստել ստեղծագործական երևակայության զարգացմանը,
2.զարգացնել սովորողների սոցիալական հմտությունները. խթանել նախաձեռնողականությունը,
3.նպաստել վերլուծելու հմտությունների զարգացումը,
4.զարգացնել համագործակցային աշխատանքներ իրականացնելու հմտություն,
5.զարգացնել մեդիագործիքների տեսակների կիրառության հմտություններ՝ բարձրացնելով մեդիագրագիտության մակարդակը,
6.արժևորել, վերաիմաստավորել հայ գրականության մեջ Խ.Աբովյանի վաստակը, նրա ունեցած դերը հայ գրականության զարգացման գործում,
7.ներկայացնել Խ. Աբովյանի ազդեցությունը հայ գրականության և արվեստի տարբեր ճյուղերի վրա,
8.գիտակցել, որ արվեստն ու գրականությունը իրական կյանքի արտացոլանքն են,
9.ընդլայնել գիտելիքները Աբովյանի ստեղծագործությունների թեմաների վերաբերյալ,
10.ներկայացնել Խ.Աբովյանի կերպարի արտացոլումը արվեստի այլ ճյուղերում:

Նախագծային աշխատանքն իրականացնելիս սովորողները հետազոտեցին և վերլուծեցին հետևյալ ոլորտները՝

1.գրականություն. Խ.Աբովյանի կյանքի և գործունեության հիմնական փաստերը,
նրա ստեղծագործությունների թեմաները և ազդեցությունը:
«Վերք Հայաստանի» վեպի «Հառաչքան»-ի ուղերձները:
Խ.Աբովյանի կերպարի գեղարվեստականացումը:
2.Կերպարվեստ. Խ. Աբովյանի կերպարի պատկերումը գեղանկարիչների կողմից:
Դիմանկարի ստեղծման պատմությունը:

3.Քանդակագործություն. Խ.Աբովյանի արձանի ստեղծման և տեղադրման պատմությունը:
4.Կինո և թատրոն. Ֆիլմեր Խ.Աբովյանի մասին:
Գրական- երաժշտական ցերեկույթի ներկայացում:

5.Երաժշտություն. երգեր՝ նվիրված Խ. Աբովյանին և նրա ստեղծագործություններին:

Հանրակրթության պետական չափորոշչով սովորողներն ապահովեցին հետևյալ վերջնարդյունքները.
Ստեղծել Խ. Աբովյանի կյանքն ու գործունեությունը ներկայացնող , արվեստի տարբեր նյուղերում նրա կերպարի անդրադարձն արտացոլող գրքույկ:
Կազմակերպել Խաչատուր Աբովյանին նվիրված գրական- երաժշտական միջոցառում:

Հետազոտությունները սովորողները կատարեցին ուսումնական հետևյալ մեթոդաբանությամբ ՝ գրական հետազոտություններ, տեսանյութերի և փաստագրական ֆիլմերի դիտում, նյութերի հավաքագրում, արվեստի տարբեր ճյուղերում Աբովյանի կերպարի բացահայտում, այցելություն գրողի տուն- թանգարան ,գրավոր և բանավոր քննարկումներ:

Նախագծային աշխատանքն իրականացվեց 6 փուլով՝ անհրաժեշտ նյութերի հավաքագրում, ուսումնասիրություն, մշակում, այցելություն Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան, միջոցառման ծրագրի քննարկում ,գրքույկ- ձեռնարկի կազմում և հանրային ներկայացում:

Նախագծային աշխատանքի ընթացում սովորողների մոտ զարգացան հետևյալ կարողունակությունները՝ սովորել սովորելու կարողունակություն, ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն, լեզվական գրագիտություն և կարողունակություն, մշակութային կարողունակություն, ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն, թվային և մեդիա կարողունակություն :

Նախագիծը ապահովեց նոր ՀՊՉ –ով ամրագրված 4 բաղադրիչները՝ գիտելիք, հմտություն, դիրքորոշում և արժեք: Նախագծային աշխատանքի ընթացքում քննարկումները ծավալվեցին հետևյալ խաչվող հասկացությունների շուրջ՝ ժամանակ և տարածություն, պատճառ և հետևանք, օրինաչափություն, կայունություն և փոփոխություն, անհատ և հարաբերություններ, զարգացում , անհատական և մշակութային արժեհամակարգ:

Թեմայից սովորողների ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները, նրանց գործունեությունը, համագործակցութունը և նախագծի պատասխանությունը գնահատվեց բարձր և արդյունավետ:

## 10-րդ դասարանի հումանիտար խմբի «Խաչատուր Աբովյան-արվեստ փոխադարձ կապ:Աբովյանի կերպարը արվեստում » թեմայով նախագծային աշխատանքի գնահատում

| | Ազգանուն Անուն | Նախագծի մասնակցություն | | | | Ներկայացման հմտություններ | | | | Գնահա-տա-կան |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Մասնակցել է 1-2 քննարկման: Չի ներգրավվել աշխատանքներին | Մասնակցել է առնվազն 3 հանդիպումնե-րի և քննարկումնե-րի: | Մասնակցել է 5-6 հանդիպումնե-րի և քննարկումների: | Մասնակցել է բոլոր հանդիպումների և քննարկումների: | Սովորողի կողմից կատարված ուսումնասիրու- | Սովորողի կողմից կատարված ուսումնասիրու- | Սովորողի կողմից կատարված ուսումնասիրու-թյունները առնչվում են հիմնախնդրին: | Սովորողի կողմից կատարված ուսումնասիրու- | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | և չի կատարել իր առջև դրված խնդիրները: Չի համագործակ-ցել թիմի անդամների հետ:<br><br>**1** միավոր | Չի ներգրավվել աշխատանքնե-րին և դժվարացել է կատարել իր առջև դրված խնդիրները: Արդյունավետ համագործակ-ցել է թիմի անդամների հետ:<br><br>**2** միավոր | Ներգրավվել է աշխատանքնե-րին և կատարել իր առջև դրված խնդիրները: Արդյունավետ համագործակցել է թիմի բոլոր անդամների հետ:<br><br>**3** միավոր | Լիարժեք ներգրավվել է աշխատանքնե-րին և կատարել իր առջև դրված բոլոր խնդիրները: Նախաձեռնել է արդյունավետ և նպատակային համագործակ-ցությո ւն թիմի բոլոր անդամների հետ:<br><br>**4** միավոր | թյունները չեն առնչվում հիմնախնդրին: Բացակայում է նյութի շարադրման տրամաբանական հաջորդականու-թյունը: Սովորողի կողմից նյութը ներկայացվում է առանց որոշակի մշակման և միաբնույթ է: Սովորողի խոսքը կցկտուր է , ոչ լիարժեք և չի համապատասխա-նում բովանդակությա-նը:<br><br>**0,5** միավոր | թյունները մասամբ են առնչվում հիմնախնդրին: Նյութի շարադրանքում առանձին հարցեր անհասկանալի են: Սովորողի կողմից նյութը ներկայացվում է մշակված, սակայն միօրինակ: Սովորողի խոսքը սահուն է, հիմնականում համապատաս-խանու մ է բովանդակու-թյանը, սակայն բացակայում են հիմնավորումն-երը:<br><br>**1** միավոր | Նյութի շարադրանքը տրամաբանական է, բաղկացուցիչ մասերը փոխլրացնում են իրար: Սովորողի կողմից ներկայացված նյութը բազմազան է , ներկայացված է քննադատական մոտեցմամբ: Առկա են հեղինակային գաղափարներ: Սովորողի խոսքը սահուն է ,համոզիչ և առկա են հիմնավորումներ: Բառապաշարի բազմազանությունը և արդյունավետ կիրառումը համապատասխանում է թեմային:<br><br>**1,5** միավոր | թյունները լիարժեք արտացոլում են հիմնարար հարցերը: Նախագծի բովանդակու-թյունը հասկանալի, տրամաբանորեն է շարադրված, ընկալելի է: Սովորողի կողմից ներկայացված նյութը բազմազան է , աշխատանքը աչքի է ընկնում յուրօրինակ մոտեցմամբ, տարբերվում է ինքնատիպ և ստեղծարար գաղափարներով: Սովորողի խոսքը սահուն է , համոզիչ , փաստարկված, պատկերված և հուզականորեն հագեցած: Բառապաշարի բազմազանու-թյունը և արդյունավետ կիրառումը թեման դարձնում է առավել ներկայանալի և գրավում լսարանի ուշադրությունը:<br><br>**2** միավոր | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ադիբեկյան Միլենա | | | 3 | | | | 1,5 | | 4,5 |
| 2. | Գալստյան Նվարդ | | | | 4 | | | | 2 | 6 |
| 3. | Գրիգորյան Անի | | | 3 | | | | | 2 | 5 |
| 4. | Իսրաելյան Նարեկ | | | 3 | | | | 1,5 | | 4,5 |
| 5. | Խաչատրյան Լիանա | | | 3 | | | | | 2 | 5 |
| 6. | Հակոբյան Էմիլիա | | | 3 | | | | 1,5 | | 4,5 |
| 7. | Հովհաննիս-յան Թամարա | | | 3 | | | | 1,5 | | 4,5 |
| 8. | Մարգարյան Վարդգես | | | 3 | | | | 1,5 | | 4,5 |
| 9. | Նիկողոսյան Իռեն | | | | 4 | | | | 2 | 6 |
| 10 | Պետրոսյան Վահե | | | 3 | | | | | 2 | 5 |
| 11 | ՊՈՂՈՍՅԱՆ ՄԱՅԱԿ | | | 3 | | | | | 2 | 5 |
| 12 | Ստեփանյան Մարինե | | | 3 | | | | | 2 | 5 |

| | Ազգանուն Անուն | Նախագծի մասնակցություն | Ներկայացման հմտություններ | Գիտելիքների ստուգման գնահատական /4 միավոր/ | Նախագծային աշխատանքի վերջնական գնահատական |
|---|---|---|---|---|---|
| 1. | Ադիբեկյան Միլենա | 3 | 1,5 | 2 | 6,5-7 |
| 2. | Գալստյան Նվարդ | 4 | 2 | 4 | 10 |
| 3. | Գրիգորյան Անի | 3 | 2 | 4 | 9 |
| 4. | Իսրաելյան Նարեկ | 3 | 1,5 | 3 | 7,5-8 |
| 5. | Խաչատրյան Լիանա | 3 | 2 | 3 | 8 |
| 6. | Հակոբյան Էմիլիա | 3 | 1,5 | 3 | 7,5-8 |
| 7. | Հովհաննիսյան Թամարա | 3 | 1,5 | 2 | 6,5-7 |
| 8. | Մարգարյան Վարդգես | 3 | 1,5 | 3 | 7,5-8 |
| 9. | Նիկողոսյան Իռեն | 4 | 2 | 4 | 10 |
| 10 | Պետրոսյան Վահե | 3 | 2 | 3 | 8 |
| 11 | ՊՈՂՈՍՅԱՆ ՄԱՅԱԿ | 3 | 2 | 3 | 8 |
| 12 | Ստեփանյան Մարինե | 3 | 2 | 3 | 8 |







